ԿԱՆԹԵՂ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանք

Թեման՝ Գնահատման նոր համակարգը

ՀՀ Լոռու մարզի « Լեռնանցքի Մ. Վարդանյանի անվան միջն. դպրոց»-ի

հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Անահիտ Գրիգորյան

Բովանդակություն

1.Ներածություն

2.Գնահատման հոգեբանամանկավարժական դերն ու նշանակությունը

3.Ընթացիկ գնահատման երկու ձևերը.

Համեմատական վերլուծություն

4.Ուսուցանող գնահատման գաղափարաբանությունը

Կազմակերպման ձևերն ու տեսակները

5.Ուսուցանող գնահատմամբ դասերի օրինակներ

6.Ուսուցողական բառ- թելադրություն

7.Գրականության ցանկ

8.Եզրակացություն

Ներածություն

Ըստ սովորողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման մեթոդաբանության՝ նախկին միակ՝ միավորային ձևին ավելացվել է նորը՝ ուսուցանողը: Թեև որկու ձևն էլ ուսուցման և յուրացման արդյունքների բացահայտման և ներկայացման միջոց են, ունեն կրթության որակի և արդյունավետության բարելավման ընդհանուր նպատակ, այնուհանդերձ յուրաքանչյուր ձև ենթադրում և պայմանավորում է նաև առանձնահատուկ նպատակներ և խնդիրներ,տարբեր գաղափարաբանություններ, գործման ձևեր և եղանակներ ,բովանդակային այլևայլ տարբերություններ:Այսպես ՝ միավորային գնահատման ժամանակ գնահատման նիշերի միջոցով չափվում և գնահատվում են սովորողի ՝չափորոշիչով և ծրագրով սահմանված գիտելիքները, մասամբ նաև կարողություններն ու հմտությունները: Կրթական ոլորտում գիտելիքի, իմացական մակարդակի արտահայտություն, Ցուցիչ լինելուց, միայն վերահսկող և ստուգող գործառույթ իրականացնելուց բացի՝ Գնահատումը ձեռք է բերել նաև սովորողների հնարավորությունների բացահայտման առաջընթացի խթանման ,ուսումնական մոտիվացիայի ձևավորման, սովորողի անձի ընդհանուր զարգացման վրա մեծապես ազդող գործառույթների դեր և նշանակություն:<<Կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումներում,որպես սկզբունք ,

Նվազեցվում է միավորային կամ նիշային գնահատման վրա սևեռվելը՝ հօգուտ ուսուցանող աշխատանքների, ու գիտելիքների կիրառությունների>>:

Ուսուցանողի դեպքում գնահատումը թվանշաներով չի արտահայտվում.սովորողի ուսումնական ձեռքբերումները համեմատվում են իր նախկին ձեռքբերումների հետ ,քննվում,մեկնաբանվում և վերլուծվում են ուսումնառական գործընթացը , գործընթացի դժվարությունները,թերությունները, խոչընդոտները, նշվում և պարզվում են դրանց հաղթահարման ,վերացման հնարավոր ձևեր և եղանկներ:

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուսուցանող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է, որի միջոցով հետադարձ կապի կիրառմամբ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը:

Յուրաքանչյուր սովորող կարող է և պետք է առաջ գնա:

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԿ ՇՐՋԱՓՈՒԼ



•Հետևում է նախնական և հայտորոշիչ գնահատմանը և շարունակվում է աշակերտի ուսումնառության ընթացքում:

•Տարբերվելով ուսումնառության արդյունքի մրցակցային գնահատումից՝ այն օգնում է ուղղորդելու աշակերտին դեպի դասընթացի ավարտին անցկացվելիք ամփոփիչ գնահատումը:

Ի՞նչ է ներառում ուսուցանող գնահատումը

•Ուսումնառության նպատակները սովորողների հետ կիսելը և ապահովելը: Նրանք գիտեն՝ ի՛նչ են սովորում և ի՛նչ նպատակներով:

•Ուսուցիչն ու սովորողը գնահատում են առաջընթացը տարբեր մեթոդների միջոցով, որոնք ներառում են սովորողի ինքնագնահատումը և հասակակիցների կարծիքը (գնահատումը):

•Ուսուցչին ու սովորողը միասին ստուգում են և կարծիք հայտնում գնահատման վերաբերյալ:

•Հետադարձ կապը սովորողի համար իրականացվում է այնպես, որ օգնի նրան զարգանալու և պլանավորելու իր հաջող քայլերը:

Ուսուցանող գնահատումը շարունակական երկխոսություն է, որը պետք է կարողանա՝

•ամբողջությամբ կենտրոնանալ անձի վրա՝ հաշվի առնելով նրա զգացմունքներն ու հմտությունները և հասկանալ այն խոչընդոտները, որոնց նա կարող է հանդիպել,

•խրախուսել սովորողներին ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել իրենց սովորելու համար,

•ապահովել, որ սովորողները տեղյակ լինեն, թե ի՛նչ են սովորում և ինչու՛:

Ուսումնառության արդյունքները ստուգելը (նայելով ներկային և գալիքին)

Սովորողի և ուսուցչի ֆորմալ կամ ոչ ֆորմալ հանդիպումներն անպայման անդրադառնում են անցյալին և ներկային, որոնց ընթացքում՝

•քննարկվում են նախորդող ժամանակահատվածում սովորողի ուսումնառության արդյունքները,

•արձանագրվում է առաջադիմությունը (մասնավորապես առաջադրված բովանդակության յուրացման ուղղությամբ սովորողի առաջընթացի

վերաբերյալ):

Այնուհետև ուսուցիչն ու աշակերտը՝

•թարմացնում են ուսուցման թիրախները, մշակում նորերը,

•պլանավորում են սովորելու հնարավորությունները և առաջընթացի ուղիները:

Վերանայման հանդիպումները կարող են առանցքային դեր ունենալ ՈՒԳ-ի գործընթացում: Սակայն գործնականում ՈՒԳ գործընթացը իրականացվում է ցանկացած ժամանակ, երբ ուսուցիչը հանդիպում է աշակերտին, ներառյալ՝ աշխատանքը դասարանում:

Գնահատման հոգեբանամանկավարժական դերն ու նշանակությունը

Մանկավարժ-հոգեբանները փորձել են էմպիրիկ ճանապարհով ուսումնասիրել Սովորողների ինքնագնահատականի և ուսումնական մոտիվացիայի ձևավորման մանկավարժական գնահատականի ազդեցությունը: Ուսումնասիրության արդյունքների տվյալներով նրանք եկել են այն եզրահանգման , որ միավորային գնահատման դեպքում բարձր նիշեր ստացողների ինքնագնահատականը բարձր է և առկա են սովորելու ներքին և արտաքին մոտիվներ,իսկ ցածր գնահատական ստացողների դեպքում առկա է սեփական հնարավորությունների թերագնահատման,անինքնավստահության, սեփական անձի նշանակալիության կորստի զգացողություն.ուսումնական մոտիվացիան ընդհանրապես բացակայում է: Ըստ հոգեբանամանկավարժական ընդհանուր մոտեցման՝ մանկավարժական գնահատականը պետք է լինի ուսումնական մոտիվացիա առաջացնող գործոն ,որը մեծապես կարող է ազդել նաև երեխայի անձի ընդհանուր զարգացման վրա: Ստացվում է որ ,մանկավարժական գնահատականի ընդունված և հիմնական կիրառում ունեցող նիշային (միավորային) գնահատականը սովորողի ինքնագնահատականի և և ուսումնական մոտիվացիայի ձևավորման տեսանկյունից ունի երկակի ազդեցություն .այն արդյունավետ ազդեցություն է ունենում միայն գերազանց, լավ և մասամբբավարար գնահատական ստացողների

վրա , մինչդեռ անբավարար գնահատական ստացողների վրա ,մինչդեռ անբավարար գնահատական ստացողների դեպքում թողնում է բացասական

լուրջ հետևանքներ ՝ պատճառ դառնալով սովորելու ցանկության բացակայության ,վախի, տագնապայնության, հուզական լարվածության առաջացման: Շարունակաբար անբավարար գնահատական ստացող սովորողը հայտնվում է

հուզական որոշակի լարվածության մեջ ,որն աստիճանաբար կարող է վերածվել

ընկճախտի:

Հետազոտությունները պարզել են, որ գնահատականը դրական նշանակություն է ունենում այն դեպքում, երբ սովորողը ներքուստ համաձայնում է տրված

գնահատականին: Պարզվել է , որ լավ առաջադիմություն ունեցող աշակերտների

շուրջ 46% -ի դեպքում ուժերի սեփական գնահատումը համընկնում է ուսուցչի

նշանակած գնահատականին ,իսկ վատ առաջադիմության ունեցողների դեպքում

համընկնումներն լինում են 11%:

ՀՀետազոտությունների արդյունքով պարզվել է նաև ,որ ցածր գնահատականի դեպքում իջնում է երեխայի հավանականությունների մակարդակը :

Առաջանում է անպաշտպանվածության զգացողություն,սեփական անձի նկատմամբ

հավատի կորուստ:Այն աշակերտները ,որոնց ուսուցիչը հաճախ է ցածր

գնահատական նշանակում ,սկսում են խուսափել ուսուցչի հետ հարաբերվելուց,

ձգտում են որքան հնարավոր է քիչ ուշադրություն գրավել. Արդյունքում որոշակի

առումով օտարանում են ընդհանուր խմբից:

Մանկավարժական փորձը վկայում է , որ սովորողների զգալի մասը մտածում է ոչ թե

սովորելու , այլ այն մասին ,թե ինչ գնահատական է ստանալու:

Ուստի ուսուցչի խնդիրը պետք է լինի ընդունել գնահատման ուղորդող

դերը՝հիմնվելով ոչ թե սովորողի անձային հատկանիշների ,այլ ուսումնական

գործունեության վրա ՝գնահատումը ընդունելով իբրև սովորողի հետագա զարգացման ,սովորելու ներքին մոտիվացիա առաջացնող նախապայման:

Հոգեբան մանկավարժները համոզված են ,որ գնահատումը պետք է կատարվի

երեխայի սոցիալ –հոգեբանական զարգացման տեսանկյունից ՝լինելով օբյեկտիվ և

արդարացի:

Գնահատման առավել տարածված անարդար ,ոչ օբյեկտիվ, սխալ դրսևորումներ են՝

1. Մեծահոգությունը –Ուսուցչի հանիրավի բարձր գնահատական է նշանակում:

2.Սխալ կենտրոնական ուղղվածությունը –Ուսուցիչը խուսափում է շատ ցածր կամ շատ բարձր գնահատական նշանակելուց:

3.Գնահատումը կատարվում է ուսուցչի նախատրամադրվածությամբ.բարձր է գնահատվում այն աշակերտը ,ում նկատմամբ ուսուցիչը դրական վերաբերմունք ունի ,և հակառակը ՝ ցածր գնահատական ստանում է նա .ում նկատմամբ ուսուցիչը բարյացակամ չէ , ի սկզբանե ունի բացասական նախատրամադրվածություն:

4. Գնահատականների սխալը –ուսուցիչը դժվարանում է ցածր գնահատականից անմիջապես հետո բարձր գնահատական նշանկել կամ լավ սովորողի վատ պատասղանի դեպքում ցածր գնահատել:

Հոգեբանները պնդում են ,որ տարբեր տարիքային խմբերում գնահատումը տարբեր Նշանակություն և դրսևորում է ունենում:Այսպես օրինակ,կրտսեր դպրոցական տարիքում աշակերտի ինքնագնահատականը առավելաբար ձևավորվում է ուսուցչի գնահատման արդյունքում:Այս հասակում երեխայի ինքն իր նկատմամբ ունեցած վերաբերմունքը և ինքնահարգանքը կախված են ծնողի և ուսուցչի վերաբերմունքից: Կրտսեր դպրոցականի համար գնահատականը նաև սեփական առաջընթացը տեսնելու հնարավորություն է:

Դեռահասների միջավայրում գնահատականի նշանակությունը կարևորվում է սովորողների շրջանում բարձր դիրք ունենալու առումով:

Յուրաքանչյուր ցածր գնատականազդում է երեխայի ինքնազգացման վրա:Իր Կատարած գործողությունների արդյունքների հիման վրա երեխան պատկերացում է կազմում իր մասին .ցածր գնահատականի դեպքում երեխայի մեջ ձևավորվում է բացասական ,իսկ բարձրի դեպքում ՝ դրական պատկերացում :

Պարբերաբար ստացած ցածր գնահատականները ազդում են երեխայի ուսումնական

Մոտիվացիայի վրա. Արդյունքում կարող է նվազել սովորելու ցանկությունը: Գնահատումից կախված ՝ առանձին երեխաների մեջ կարող է առաջանալ տագնապայնություն : Տագնապայնություն և վախ կարող են առաջանալ շրջապատողների սպասելիքները չարդարացնելու, ուսուցչի,ընկերների առջև պատշաճ ձևով չներկայանալու և այլ պատճառներով:

Սովորողի `գնահատման հանդեպ ունեցած վերաբերմունքը կախված է նաև այլ գործոններից ,ինչպիսիք են,օրինակ ինքնագնահատումը,բնավորությունը, խառնվածքը և այլն:

Հոգեբանական տեսանկյունից գնահատումը կարող է նաև բացասական բնույթ և դրսևորումներ ունենալ ՝ վնասելով երեխայի անձին ,քանի որ , ինչպես արդեն նշվեց ,կարող է որոշակիորեն ազդել երեխայի ինքնագնահատականի ,ուսումնական մոտիվացիայի ,հուզական ոլորտի ,տագնապայնության առաջացման վրա և այլն: Հետազոտությունների արդյունքում պարզվել է նաև ,որ ցածր գնահատականի դեպքում իջնում է երեխայի հավանականությունների մակարդակը: Գնահատականից է կախված նաև աշակերտի ՝ դասընկերների հետ ունեցած հարաբերությունների բնույթը: Գնահատականը ազդում է երեխայի հեղինակության վրա թե' դպրոցում թե' ընտանիքում:Այս ամենից հետևում է, որ գնահատելիս պետք է հաշվի առնվեն հնարավոր բացասական ազդեցությունունեցող գործոնները և դրանց հետևանքները: Ուսուցիչը պետք է ընդունի գնահատման ոչ թե որոշիչ ,այլ ուղորդող դերը: Գնահատման համակարգում խնդրահարույց իրադրություններից խուսափելու համար հոգեբաններն առաջարկում են կիրառել այսպես կոչված << իրատեսական գնահատման>> համակարգը ,երբ գնահատումը կատարվում է ոչ միայն ուսուցչի կողմից , այլ նաև աշակերտի ինքնագնահատման միջոցով,այսինքն `աշակերտը ևս կատարում է գնահատում `իր ներկա արդյունքները համեմատելով նախորդ արդյունքների հետ: Այս համակարգը անվանում են <<ինչպիսին եմ եղել >> և <<ինչպիսին եմ դարձել >> համակարգ:

Որոշ հեղինակներ ընդհանրապես դեմ են միավորային գնահատմանը :
Ամոնաշվիլին ,օրինակ ,նշում է որ գնահատումը ընդգծում է ուսուցչի իշխանությունը Աշակերտի նկատմամբ գերակայությունը:Ըստ նրա `գնահատման դեպքում աշակերտի մեջ կառաջանան ոչ թե վախի և անհանգստության զգացումներ ,այլ ուսուցիչ –աշակերտ համագործակցություն:
Վիգոտսկին ևս դեմ էր միավորային գնահատման համակարգին:Նա նշում էր ,որ Այս համակարգը չափազանց վտանգավոր կարող է լինել,քանի որ ժամանակի ընթացքում դրա արդյունքում երեխան սկսում է սովորել միայն գնահատականի համար:Աշակերտների շրջանում իրականացված հարցման արդյունքով պարզվել է որ նրանց զգալի մասը դեմ է միավորային հնահատման համակարգին ,քանի որ կարծում է ,որ կարևորը ոչ թե գնահատականն է, այլ գիտելիքը:
Եվ ի վերջո ,առանց միավորային գնահատման ուսուցման գործընթացն ավելի ` արդյունավետ է դառնում:Պետք է հստակ հասկանալ ,որ գնահատումը ոչ միայն մանկավարժական ,այլ սոցիալ-հոգեբանական գործընթաց է:
Ընտանիքում ծնողների 'երեխայի հանդեպ ունեցած վերաբերմունքը հաճախ կախված է լինում դպրոցում ստացած գնահատականներից և շատ դեպքերում երեխայի համար սթրեսային վիճակների պատճառ է դառնում:
Լիպկինան աշակերտների շրջանում իրականացրած հարցման արդյունքում պարզել է ,որ հարցվածների շուրջ 98% -ը ցանկանում է ,որ իրենց ուսումնական գործունեությունը գնահատվի:Սա ունի իր հիմնավորումը .ցանկացած գործունեություն ծավալելիս մարդը ձգտում է արժանանալ որոշոկի գնահատանքի: Բացի այս' կա կարծիք ,որ դրական գնահատականը դրդող ազդեցություն ունի և աշակերտի մեջ առաջացնում է ուսումնական ուժեղ մոտիվացիա,նույնը տեղի է ունենում նաև բացասական գնահատականի դեպքում ,սակայն միայն այն պարագայում,եթե գնահատականը օբյեկտիվ է ,և աշակերտը գիտակցում է դա:
Մեկ հանգամանք ևս. գնահատականը մեծապես ազդում է երեխայի վարքի վրա,

Քանի որ անհնար է սովորեցնել առանց դաստիրակելու:Որպեսզի գնահատումը բացասական ազդեցություն չունենա ,անհրաժեշտ է այնպիսի համակարգի կիրառում, որով հնարավոր լինի գնահատել երեխայի ստեղծագործական ունակությունները, որով հաշվի կառնվի երեխայի հոգեկան զարգացվածության մակարդակը:

Ընթացիկ գնահատման երկու ձևերը .

Համեմատական վերլուծություն

Ընթացիկ գնահատման նոր համակարգի հիմնական նպատակը կրթության արդյունավետության և որակի բարձրացումն ուսուցման և ուսումնառական գործընթացի խթանումը:Սակայն ընդհանուր նպատակով հանդերձ՝ընթացիկ գնահատման երկու ձևերը `միավորային և ուսուցանող,ունեն մասնավոր և էական առանձնահատուկ նպատակներ ,մոտեցումներ ,բովանդակային և մեթոդական տարբերություններ:Ընդ որում ,տարբեր են գնահատման նպատակով առաջադրվող աշխատանքների,հանձնարարություններիբնույթը ,տիպը ,ծավալը ,բովանդակային ո ուղղվածությունը:Այսպես օրինակ,բանավոր հարցման պարագայում ուսուցանող գնահատում կատարելու նպատակով սովորողին առավելաբար տրվում են բաց, իսկ միավորայինի դեպքում առավելապես փակ տիպի հարցեր:Այսպես նաև ` հայտորոշիչ թեստ տրվում է ուսուցանող գնահատում կատարելու համար,քանի որ գնահատման նպատակը ստուգելը չէ ,այլ ճշտել –որոշելը , թե արդյոք աշակերտը ունի բավարար ,անհրաժեշտ իմացություն և հմտություն հաջորդ նյութի յուրացման համար:

Ուսուցանող գնահատում կարող է կատարվել՝

ա/ ուսումնական նյութի ուսումնասիրությունից առաջ (հայտորոշում), երբ պարզվում է սովորողների ` նյութի մասին ունեցած նախնական պատկերացումների չափը և որակը:

բ/ նյութի ուսումնասիրության ընթացքում (դիտարկում), երբ կատարվում է ուսումնական ձեռքբերումների ,հաջողությունների, դժվարությունների և յուրացման խոչընդոտների վերլուծություն,

գ/ նյութի ուսումնասիրության ավարտին ,երբ կատարվում է նյութի յուրացման արդյունքի տարապատկերի բացահայտում:

Միավորային գնահատման պարագայում յորաքանչյուր սովորող և ամբողջ Ուսումնական խումբը (դասարան) ուսուցչի կողմից միաժամանակ ստանում և կատարում են միևնույն տեսակի առաջադրանք (թելադրություն ,բանավոր հարցում ,թեստ , հարցաշար և այլն),ուսուցանողի դեպքում առանձին աշակերտներ կամ դասարանի առանձին փոքր խմբեր կարող են ստանալ և կատարել տարաբնույթ և բազմազան առաջադրանքներ:

Միավորային գնահատումը չի երթադրում սովորողի ակտիվ մասնակցություն Գնահատման գործընթացին,այնինչ այդ հանգամանքը ուսուցանող գնահատման ՝ կարևոր ցուցիչներից է .սովորողները ուսուցճի օգնությամբ և հուշումներով նախօրոք սահմանում են գնահատման ճափանիշները ,գնահատման արդյունքը համեմատում իրենց նախնական գիտելիքների ,կարողությունների և հմտությունների հետ , կշռադատում կատարած աշղատանքը ,ինչն էլ փոխում է գնահատման նպատակը և բնույթը՝այն դարձնելով վերլուծական և հասկանալի:

Ուսուցանող գնահատումը ապահովում է գիտելիքի յուրացման ընթացքի և վերջնարդյունքի արժևորում ,իսկ միավորային միայն վերջնարդյունքի ստուգում և գնահատում ,որը սովորողին չի տրամադրում սովորելու ընթացքի բարելավման , առաջընթացի ապահովման առաջարկներ ,չի հուշում առաջացած խնդիրների և դժվարությունների հաղթահարման ուղիներ և լուծումներ:Ի վերջո ,ուսուցանող գնահատման պարագայում սովորողը ոչ թե այլոց ,այլ ինքն իր հետ է համեմատվում:

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ընթացիկ գնահատման երկու ձևերից մեկի՝ուսուցանողի դեպքում սովորողի համար հասկանալի է դառնում նաև սովորել գործընթացը:Իր իսկ կողմից կատարվող դիտումները, ուսուցչի և ընկերների վերլուծություններն ու մեկնաբանությունները սովորողին ոչ միայն պարզ ու հասկանալի են դարձնում ,թե ինչ է սովորելը ,այլև կազմակերպում են այն . հետադարձ կապի միջոցով սովորողը տեղեկանում է,թե ինչպես, մտային ինչ քայլերի և գործողությունների միջոցով է կատարվում ուսումնական նյութի յուրացումը:Ուսուցանող գնահատումը կարևոր դեր և նշանակություն ունի նաև հենվ իր՝ սովորողի համար, քանի որ յուրաքանչյուր սովորող նախ իր կատարած աշխատանքի գնահատման պահանջմունք ունի, բացի այդ՝ գնահատման այս ձևը օգնում է ,որ ոչ միայն բացահայտվեն ,այլև ըմբռնելի ու հասկանալի դառնան մտային գործողությունները,ուսման նպատակները, հետևություններ արվեն յուրացման ընթացքի բարելավման համար: Ուսուցանող գնահատման դեպքում սովորողները փաստական և վերլուծական տեղեկություններ են ստանում իրենց ուսումնառական ձեռքբերումների ,կրթական հնարավորությունների մասին ,ուսուցչի և ընկերներիխորհրդատվությամբ, ուղղորդմամբ արժևորում դրանք ,այսինքն՝պարզում ,թե <<...ինչպիսի հաջողությամբ կամ ինչ չափով են հասնում իրենց ուսումնական նպատակներին>>:

Ուսուցանող գնահատման գործընթացի կարևոր տարրերից մեկը՝ արժևորումը,որն օգնում է սովորողին ձեռք բերել նաև այնպիսի որակներ ,որոնք կարող են դառնալ ինքնագնահատման ձևավորման նախադրյալ:

<<...Ուսուցանող գնահատումն ընդհանուր տերմին է ,որն օգտագործվում է գնահատման գործադրումը նկարագրելու համար:

Ուսուցանող գնահատման էությունը բոլոր ձևերով սովորելուն աջակցելն է>>:

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ ԴԱՍԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Դաս 1

Առարկան ՝ հայոց լեզու

Դասարանը՝ 12-րդ

Դասի թեման ՝ Հակոբ Մնձորու <<Հարսիկը >>պատմվածքը

(դատողական բնույթի ուսուցողական փոխադրություն)

Հատկացվող ժամաքանակը ՝ 2դասաժամ

Նպատակները

1.Գիտելիք (իմանալ)՝

տեղեկություններ Հակոբ Մնձորու մասին

. <<Հարսիկը>> պատմվածքի գաղափարական և գեղարվեստական

Բովանդակությունը

. Դատողությունը ՝ որպես մտային գործունեության դրսևորում

2.Կարողություն (կարողանալ կատարել)՝

.ինքնուրույն հետազոտական ,անհատական և խմբային աշխատանք,

.ինքնագնահատում և փոխադարձ գնահատում,

.դատողություններ և ուսումնական նյութի փոխադրում

3.Արժեքային համակարգ

.<<Հարսիկը>> պատմվածքի գաղափարագեղագիտական բարոյական ընկալումների մասի

դատողությունների իմաստավորում –գնահատում,

.դատողությունների քննարկման վերլուծությամբ՝ սեփական հոգեկերտվածքի

Ինքնաճանաչում և ինքնաբացահայտում,

. << Ապրումակցում >> բարոյահոգեբանական արժեքի գիտակցական ը նկալում և ըմբռնում

Խնդիրները ՝

.ձևավորել աշխատանքային ենթախմբեր

.մշակել և պլանավորել ուսումնական գործողություններիկ պլանավորման ընթացակարգ

. սահմանել գնահատման չափանիշներ

.կատարել նյութի գրավոր փոխադրում

Կիրառվող հիմնական մեթոդներն և հնարները `

.նյութի հատվածական ընթերցում և հետազոտում

.բանավոր և գրավոր հաղորդումներ

.քննարկում

.<<Պրիզմա>>

Գնահատման ձևը ` ուսուցանող

Ուսումնական նյութը՝ պաստառներ ,նշագրիչներ ,ուսումնական տետրեր:

Տնային առաջադրանք ` նախապատրաստվել <<Հարսիկ>> վերնագրով թեմատիկ Փոխադրություն:

Դասի ընթացքը ներկայացվում է ուսուցչի և սովորողների գործողությունների նկարագրությամբ՝ քայլաշարով:Ուղղորդումներով պարզաբանվում և հիմնավորվում են կատարվող գործողությունների ուսումնական դերն ու նշանակությունը:

Հանրակրթական դպրոցում ուսուցման իրականացման հիմնական ձևի դասի բաղկացուցիչ մասերից մեկը մուտքն է: Մուտքի ժամանակ կիրառելի մեթոդներ ,հնարներ ,ուսուցման ձևեր կարող են լինել՝

.մտահոգը

.պրիզման

.ուսուցչի հաղորդումը

.ուսուցչի համառոտ խոսքը ,բացատրությունը կամ ուղղորդումը

.անդրադարձը և այլն:

Իբրև մուտք ընտրված է ուսուցչի համառոտ խոսքը՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Մնձորին մեկն է սփյուռքահայ այն արձակագիրներից,ովքեր ապրեցին հայրենիքից հեռու, բայց միշտ փայփայեցին երգրի կարոտը>>:

Ուղղորդում : Ուսուցչի համառոտ խոսքին հաջորդում է բանավոր հաղորդումը դասի նպատակների և խնդիրների մասին:Մշակվում և պլանավորվում են ուսումնական գործողությունները , դրանց կատարման ուղղված քայլերը:

Քայլ 1. Ուսուցիչը հայտնում է փոխադրության վերնագիրը՝ <<Հարսիկը >>,և առաջարկում սովորողներին բարձրաձայնել իրենց ընկալումները:

Քայլ 2. Կարող են հնչել այնպիսի մոտավոր պատասխաներ՝

.դժբախտ սիրո պատմություն է

.ժամանակից շուտ այրիացած կնոջ մասին է

Քայլ 3. Ուսուցիչն ամբողջացնում է հնչած պատասխաններ ավելացնելով ,որ հարսիկ բառով արևմտահայերենում անվանում են մեծ գերդաստանում միասին ապրող եղբայրների կանանց,որոնք գերդաստանի բոլոր երեխաներին վերաբերվում են նույն սիրով ,ջերմությամբ

և հոգատարությամբ,ինչպես սեփական երեխաներին:

Ուղղորդում: Փոխադրությունը դատողական բնույթի է, ուստի անհրաժեշտ է ,որ սովորողները դատողություններ անելու և դատողական բնույթի խոսք կառուցելու համար **դատողություն** հասկա ցության մասին ունեն ճիշտ պատկերացումներ և որոշակի գիտելիքներ:Խնդիրների լուծմանը կարող է օգնել <<Պրիզմա>>մտային վարժության –հնարը: <<Պրիզման>> կարող է ունենալ գծապատկերային այսպիսի արտահայտություն:



Դատողությունը հիմնավորված եզրակացությունն է:

Ուղղորդում :<< Պրիզման >> մտային վարժություն է,ուսումնական հնար ,մտածողության ընթացքը պատկերավոր ձև : Այն կիրառելի է դասի տարբեր փուլերում:Հիմնական նպատակը

ուսումնասիրվող գաղափարի կամ հասկացության մասին ենթագիտակցական ոլորտում եղած զուգորդական կապերի վերհանումը և վերահսկումն է:Ենթագիտակցական մտածողության վրա հիմնված այս ընտացքը շարունակվում է մինչև վերջ:

Պրիզման եզրափակվում է վերջնաբառով (եզրակացություն) :Վարժության

Կատարման վերջնաքայլը մեկնաբառի, վերջնաբառի տրամաբանական կապի վրա կառուցված միտքն որն արտահայտվում է նախադասությամբ:

Քայլ 6. <<Պրիզմայի >>շրջանակներում գրված բառերի շուրջ ծավալվում է խմբային քննարկում, ինչը քննարկում ,ինչը խթանում է սովորողների հետաքրքրությունը , մեկնաբանվում և հասկացվում է դատողություն բառը:

Յուրաքանչյուր աշակերտ քննարկման արդյունքում աշխատանքային տետրում ամբողջացնում է իր պատկերացումները և ցանկության դեպքում ներկայացնում:

Ուղղորդում: Խմբային քննարկումը ,այսպիսով, դառնում է ուսումնական բուն գործընթացի արդյունավետ սկիզբ:

Ուսուցիչը կարդում է տեքստը մի քանի փուլերով `նախապես հրահանգելով բնութագրական դատողություններ գրառել:Դասարանը ուսուցչի օգնությամբ **դատողություն** հասկացության տեսանկյունից դիտարկում է ներկայացվող դատողությունները ,գնահատական տալիս՝ հաշվի առնելով ձևակերպման գրագիտությունը,ինչպես նաև համապատասխանությունը բնագրին:

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԱՌ- ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ուղղորդում: Ուսուցանող գնահատունը ոչ թե պարտադրում ,այլ օգնում է սովորելու ,նաև հասկանալու իմաստավորելու և ամրապնդելու սովորածը: Ներկայացվող բառ - թելադրության նպատակը բ-պ-փ բաղաձայների ուղղագրական իմացությանբարելավումը,ամրապնդումը և ուղղագրական հմտությունների հղկումն է: Խնդիրն է ՝ ինքնուրույնաբար հետազոտել թելադրվող բառաշարքում առկա ուղղագրական օրինաչափությունները,դատողություններ անել ,ձևակերպել և ներկայացնել:

Թելադրության այս ձևը ուսուցողական ուղղվածությամբ ուղղագրական վարժանք է,որը մի կողմից ենթադրում է սովորողների ուղղագրական գիտելիքների ստուգում,մյուս կողմից զարգացնում է մի ամբողջ շարք բառերի գրության և արտասանության մեջ կողմնորոշելու,շեղումներ նկատելու և բառերի ուղղագրական օրինաչափությունները

մտովի վերլուծելու կարողությունները:

Բառ –թելադրությունը վերաբերում է բ-պ-փ –ի ուղղագրությանը :Ուսուցիչը նախապես

կազմում է այդ ուղղագրությանը վերաբերող բառախումբ:

Գինարբուք,աղբակույտ,ամփոփել,ամպհովանի
,թմբլիկ,կափկափել,կապկպել,դարբին,Ծոփք,

անխաբ ,կոպ և այլն: ՝

Թելադրությունը գրում է ամբողջ դասարանը. երեք հոգի ՝ գրատախտակի մոտ ,մյուսները

տեղերում:Ուսուցիչը դանդաղ կարդում է բառերի շարքը: Գրատախտակին սյունակներում

առանձնացված աշակերտները կատարում են գրառումները:

Առաջին աշակերտը գրում է բ-ով ՝,երկրորդ աշակերտը՝ պ-ով, իսկ երրորդ աշակերտը ՝ փ-
ով

գրվող բառերը: Թելադրությունն ավարտելուց հետո գրատախտակի մոտ հրավիրված

աշակերտները կատարում են փոխադարձ ստուգում:Դասարանը կատարում է

ինքնաստուգում: Աշակերտների ստուգումներից հետո ուսուցիչը նախ ստուգում է

գրատախտակի մոտ աշխատած աշակերտների գրածները ,հետո մյուսներինը:

Յուրաքանչյուր աշակերտի միաժամանակ գնահատելով երկու հնչյուն- տառի ուղղագրական

գիտելիքների համար:Դասարանի ուղղագրական իմացության մակարդակը պարզելուց հետո

ուսուցիչը գրատախտակի մոտ է կանչում չորրորդ աշակերտին և թելադրում

բառակապակցություններ:Այսպիսի աշխատանքը ունի կատարված սխալներն ուղղելու
ճիշտ

Ուսուցչի ուսուցանող գնահատման հիմքը կամ ելակետը սովորողների թույլ տված

սխալների քանակն է ,որը ,ինքնին պայմանական գնահատական լինելով ,այլևս
անհատական

վերլուծության կարիք չունի:

խմբավորելով բոլոր սխալները ՝աշակերտն ուսուցչի օգնությամբ վերհիշում են բ-պ-փ-ի

ուղղագրության բոլոր դեպքերը ,բացառությունները,հիմնավորում դրանք բառակազմական

վերլուծությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ .Երևան, 2003թ.:

2.Սարուխանյան Ս. Գիտելիք ,թե իմացություն ,Կրթություն,2001թ.:

3.Մ.Դավթյան ,Մ.Գրիգորյան և ուրիշներ ,Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ ,Սեմինար պարապմունքների ուղեցույց ,Երևան 2005թ.:

4.Ուսուցանող գնահատում, Վանաձոր 2019թ. Սուսաննա Սարուխանյան,Ա.Իսկանդարյան,Նունե Դիշաղջյան

5. Համացանց և այլն:

Եզրակացություն

Այսօր ուսուցիչներիս համար ոչ միանշանակ և բարդ իրավիճակ է ստեղծվել: Մանկավարժական գիտության և իրականության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունենում:Այսօր իրավիճակը փոխվել է: Մեզ արդեն մատչելի են նոր տեխնոլոգիաները, տեղեկատվության բազմաթիվ աղբյուրները, սակայն տեղեկատվության այս բազմազանությունն էլ իր հերթին խնդիրներ է առաջ բերում: Նոր նպատակները փոփոխություններ ենբերել նաև կրթության բովանդակության մեջ: Զարգացնելով նորը, առաջ քաշվեց նաև ուսուցման, ստուգման ու գնահատման նոր մեթոդների անհրաժեշտությունը:Ուսուցիչները ակտիվ մասնակցում են այս գործընթացին, անցկացվում են վերապատրաստումներ՝ մաս նագիտական զարգացման համակարգի շրջանակներում, ներդրվում են նոր մեթոդներ ու տեղեկատվության հետ աշխատելու, նորտեխնոլոգիաներից օգտվելու կարողություն: Պետք է ուսուցիչները անընդհատ զբաղվեն ինքնակրթությամբ, ինքնակատարելագործ- մամբ: Եվ այս ամենը կնպաստի ավելի որակյալ կրթության:

Այս ամենի հետ շատ կարևոր տեղ ունի գնահատումը: Կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումներում, որպես սկզբունք, նվազեցվում է միավորային կամ նիշային գնահատման վրա կենտրոնանալը՝ իօգուտ ուսուցանող աշխատանքների, գործնական աշխատանքների ու գիտելիքների կիրառությունների: Հետադարձ կապով նշվում են վերլուծություններից ստացված կարևոր արդյունքները և արվում հետևություն-ներ՝ կապված ուսուցման ձևերի ու մեթոդների պետական չափորոշիչների, ծրագրային նյութերի և թեմատիկ պլանների վերանայման անհրաժեշտության հետ:

Այս ամենով, մենք՝ ուսուցիչներս արժևորում, դատողություններ ենք անում աշակերտի արածի և ձեռք բերածի արժեքային համակարգի մասին: Մեկ ուսումնական տարի հետո կդրվի նոր գնահատման գործընթացը, որը իրենից ներկայացնում է ոչ միավորային գնահատում: Տարրական դպրոցում միավորային գնահատում չի իրականացվի, լինելու է բառային՝ բնութագրող:

Ես ինքս մասնակցել եմ «Քայլ առ քայլ», «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը ուսուցման վաղ շրջանում», «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրերի և նաև մի շարք այլ վերապատրաստումների: Այս

ամենը ինձ օգնում է ճիշտ կազմակերպել իմ աշխատանքը, քայլել ժամանակի հետ, ճիշտ հասկանալ նորամուծությունները և կիրառել իմ կրթական գործընթացում հօգուտ աշակերտի:

Հետազոտությունը ճշմարտության որոնումն է, և դրա շուրջ ծավալված գործունեությունը պետք է լինի ազատ: